ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«ԱԲՀ-ԳՀԽԱՇՁԲ-22/03» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման հանձնաժողովի նիստի

ք. Աբովյան

16/03/2022 թ.
ժամը 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Զոբանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ջ. Սարգսյան, Լ. Իսահակյան, Գ. Խաչատրյան, Ս. Չիտչյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան

Պատվիրատուն՝ Աբովյանի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր. 1 հասցեում, ստորև ներկայացնում է «ԱԲՀ-ԳՀԽԱՇՁԲ-22/03» ծածկագրով գնման ընթացակարգի մասին համառոտ տեղեկատվություն.

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին
(Ա. Զոբանյան)

Ընդունել ի գիտություն,որ հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2022 թվականի մարտի 10-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. Գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին
(Ա. Զոբանյան)

Սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Անվանումը
1	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ
2	«ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ
3	«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների մասին
(Ա. Զոբանյան)

3.1 Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Նախահաշվային գին
Չափաբաժին 1՝ Աբովյան համայնքի կարիքների համար համայնքի ամբողջ տարածքում ասֆալտապատման և ասֆալտի փոսային վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ					
1	«ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ	300 000	_	300 000	540 000
2	«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ	40 000 000	8 000 000	48 000 000	
3	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	60 000 000	12 000 000	72 000 000	

*Առաջարկված գինը մասնակիցների կողմից www.armeps.am կայքի միջոցով ներկայացված գինն է:

Մասնակիցների գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:
Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների մասին

(Ա. Զոբանյան)

4.1 Հաշվի առնելով այն, որ գնումը կազմակերպված է «Գնումներ մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը գնահատող հանձնաժողովը որոշեց՝ գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների՝ 14.03.2022թ. ժամը 11:00-ին, ք. Աբովյան Բարեկամության հր.1 հասցեով, սակայն 14.03.2022թ. ժամը 9:00-ին մրցույթի կարգավիճակը տեխնիկական խնդիրների պատճառով արդեն լուծարված էր, ինչի հետևանքով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների նիստը չի կայացել: Խնդրի վերաբերյալ տեղեկացվել է ֆինանսների նախարարությանը: Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին նորից հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների՝ 16.03.2022թ. ժամը 11:00-ին, ք. Աբովյան Բարեկամության հր.1 հասցեով: Սակայն գնման ընթացակարգի գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների նիստը չի կայացել, քանի որ ոչ մի մասնակից նիստին չի ներկայացել:

5. Բացված հայտերում պահանջվող/պարտադիր/ փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Զոբանյան)

5.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր /պարտադիր/ փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ.

«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի և «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկների, որոնք գերազանցել են նախահաշվային գինը:

5.2 «ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված հավելված 1.3-ը թերի է, մասնավորապես՝ հայտարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը բացակայում է /1.3.3/:

5.3 Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝

. «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի և «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը մերժել՝ նախահաշվային գինը գերազանցելու հիմքով պայմանավորված:

• «ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

5.4 «ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ -ն մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել է հավելված 1.3-ի շտկված տարբերակը:

Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը /պարտադիր/ գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ	Բավարար
«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ	Անբավարար
«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	Անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

6. Բացված հայտերում պահանջվող/ոչ պարտադիր/ փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Չոբանյան)

6.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր /ոչ պարտադիր/ փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ.

1. «ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը ապահովող հավելված 3-ը թերի է ներկայացվել:

6.2 Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝

«ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

«ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ-ն մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել է հավելված 3-ի շտկված տարբերակը:

7. Գնային և ոչ գնային պայմանների գնահատման չափանիշների մասին

(Ա. Չոբանյան)

7.1 Ոչ գնային չափանիշները գնահատող հանձնաժողովի որոշմամբ գնահատվել է հետևյալ կարգով.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Գնահատման չափանիշը		
		Մասնագիտական փորձառություն	Աշխատանքային ռեսուրսներ	Ընդամենը
		/առավելագույն միավորը/40/	*/առավելագույն միավորը/30/*	*/առավելագույն միավորը/70/*
1	«ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ	40	30	70

7.2 Գնային պայմանը գնահատվել է հետևյալ կարգով/համաձայն հրավերով սահմանված բանաձևի/.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գնային պայմանի գնահատականը
		Առավելագույն միավորը/30/
Չափաբաժին 1՝ Աբովյան համայնքի կարիքների համար համայնքի ամբողջ տարածքում ասֆալտապատման և ասֆալտի փոսային վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ		
1	«ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ	30

7.3 Բավարար գնահատված յուրաքանչյուր մասնակցին տրվող գնահատականը գնահատվել է հետևյալ կարգով /համաձայն հրավերով սահմանված բանաձևի/

Զբաղեցրած տեղ	Մասնակցի անվանումը	Մասնակցին տրված ընդհանուր գնահատականը (ՄԳ)
		Առավելագույն միավորը/42/
Չափաբաժին 1՝ Աբովյան համայնքի կարիքների համար համայնքի ամբողջ տարածքում ասֆալտապատման և ասֆալտի փոսային վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ		
1	«ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ	42

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

8. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի
և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին
(Ա. Չոբանյան)

8.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԱԲՀ-ԳՀԽԱՇՁԲ-22/03» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվում N 1 չափաբաժնով «ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ-ն, որպես ամենաբարձր գնահատական (ՄԳ) ստացած մասնակից:

8.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 5 օրացուցային օր: Ընտրված մասնակիցներին կներկայացվի պայմանագիր կնքելու առաջարկ:

8.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝		Ա. Չոբանյան
Հանձնաժողովի անդամներ՝		Ջ. Սարգսյան
		Լ. Իսահակյան
		Գ. Խաչատրյան
		Ս. Չիտչյան
Հանձնաժողովի քարտուղար՝		Ա. Ծատուրյան